ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՆՈՔՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆԻ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մայրենի)»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Հարությունի Գյուլամիրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Գալստյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գրետա Հովհաննեսի Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. նոյեմբերի 9-ին, ժամը՝ 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ.-ի սեպտեմբերի 29-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: ՀՀ կրթության քաղաքականության և բովանդակության մեջ իրականացվող բարեփոխումների համատեքստում կարևորվում է անձի հաղորդակցական կարողությունների ձևավորումը՝ որպես նրա կենսագործունեության կարևոր ունակություն:

Հայտնի է, որ մարդը կյանքում բազմազան սոցիալական դերեր է կատարում, որոնք էլ թելադրում են նրա հաղորդակցական վարքը: Երեխան ևս տանը, մանկապարտեզում, դպրոցում, հասարակական վայրերում տարբեր դերերով է հանդես գալիս և, բնականաբար, տարբեր կերպ պիտի խոսի, հաղորդակցվի և գործի: Հաճախ նաև դրանով է պայմանավորված, թե նա որքանո՛վ ճիշտ ու համարժեք կընկալվի զրուցակցի կողմից, նրա շփումը արդյունավետ կլինի՞, կհասնի՞ իր հաղորդակցման նպատակին, կդրսևորի՞ բարեկիրթ վարք:

Անառարկելի է, որ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման արդի փուլում մեծապես խարխլվել է անձի առերես հաղորդակցման գործընթացը. ժամանակակից սերունդն առավելապես նախընտրում է ժամանակն անցկացնել թվային գործիքների առջև, քան տարեկիցների շրջանում կամ՝ ընդհանրապես հասարակական միջավայրում: Այս համատեքստում ծագած խնդիրները մանկավարժների և կրթության ոլորտի պատասխանատուների համար լուրջ մարտահրավերներ են, որոնք թելադրում են ոչ միայն այդ ուղղությամբ նոր քաղաքականության մշակման անհրաժեշտություն, այլև սովորողների համար անհրաժեշտ մանկավարժական պայմաններ ստեղծելու պահանջ: Տարրական դպրոցում մեր իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում բացահայտեցինք, որ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման ուղղությամբ աշխատանքներն անբավարար են, բովանդակությունը՝ անկատար: Թեև տարրական դպրոցի բոլոր դասարանների մայրենիի առարկայական ծրագրերում որոշակի տեղ է հատկացված նշված կարողությունների զարգացմանը, սակայն մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտեցինք, որ այդ ուղղությամբ ուսուցիչները չունեն անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ և կարողություններ, ավելին՝ դասագրքերի ուղեցույցներում գրեթե անդրադարձ չկա այս խնդրին, ցավոք, այս խնդրի շուրջ նաև հայալեզու գրքեր և հոդվածներ քիչ են հրատարակվել:

Այսպիսով՝ մեր հետազոտության թեմայի *արդիականությունը* պայմանավորված է ժամանակակից մարդու բազմաբնույթ գործունեության արդյունավետության բարձրացման գործում հաղորդակցական կարողությունների անառարկելի կարևորությամբ, մյուս կողմից՝ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների մակարդակի

անբավարարությամբ և տարրական դպրոցում այդ ուղղությամբ աշխատանքների անկատարությամբ:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանն իրենց աշխատություններում անդրադարձել են հայ մանկավարժներ Ս. Աբրահամյանը, Լ. Ասատրյանը, Մ. Աստվածատրյանը, Ջ. Գյուլամիրյանը, Գ. Թերզյանը, Հ. Խաչատրյանը, Կ. Թորոսյանը, Ա. Թոփուզյանը, Ա. Մանուկյանը, Ա. Տեր-Գրիգորյանը և այլք, արտասահմանյան գիտնականներ Գ. Անդրեևան, Է. Բեռնը, Լ. Բոժովիչը, Լ. Վիգոտսկին, Օ. Իստրատովան, Յ. Կոմենսկին, Ն. Կուզմինան, Տ. Լադիժենսկայան, Մ. Լիսինան, Լ. Մունիրովան, Կ. Ուշինսկին, Մ. Ֆալեյը, Կ. Յասպերսը, Ե. Ռոջերսը, Ս. Սաունդերը և այլք: Սակայն մեր գիտական հետաքրքրությունները վերաբերում են ՀՀ տարրական դպրոցի մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացին, ինչը դեռևս գիտականորեն լիարժեք չի հետազոտվել:

Մեր **<u>ուսումնասիրության նպատակն</u>** է եղել բացահայտել կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողութունների զարգացման ուղղությամբ մայրենիի դասերի հնարավորությունները, մշակել և ՀՀ տարրական դպրոցում ներդնել կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդական համալիր:

<u>Հետազոտության օբյեկտը</u> ՀՀ տարրական դպրոցում սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համալիրն է:

<u>Հետազոտության վարկածի</u> համաձայն՝ մեր մշակած մեթոդական համալիրի կիրառումը կնպաստի կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, եթե՝

ա. տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման գործընթացը դառնա աշակերտակենտրոն, առավել գործնական, հետաքրքրաշարժ և զարգացնող,

բ. ուսումնասիրվեն մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական գործունեության վրա դրականորեն ազդող հոգեբանամանկավարժական գործոնները, մշակվի, փորձարկվի և ներդրվի նշված գործընթացի արդյունավետությանը նպաստող մեթոդական համալիր,

գ. մշակվեն և ներդրվեն կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող տարրական դասարանների ուսուցիչների մասնագիտական որոշակի կարողունակություններ,

դ. տարրական դպրոցում մայրենիի դասերն իրականացվեն կրթական բարենպաստ միջավայրում՝ որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող կարևոր նախապայման:

Ուսումնասիրության նպատակի իրականացման և ներկայացրած առաջադիր վարկածը ստուգելու համար առաջադրվել են **<u>հետազոտության հետևյալ խնդիրները.</u>**

1. ուսումնասիրել և վերլուծել տարրական դպրոցում մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի պատմական փորձը,
2. բացահայտել մայրենիի ուսումնասիրության գործընթացում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող գործոնները՝ դրանք դիտարկելով նրանց ճանաչողական հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարման տեսանկյունից,
3. բացահայտել հաղորդակցման գործընթացում կրտսեր դպրոցականների դժվարությունները, դիտարկել դրանց պատճառները, մշակել, փորձարարությամբ հիմնավորել ու ներդնել մայրենիի առարկայական ծրագրով նախատեսված նյութերի ուսումնասիրության միջոցով սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված մեթոդական համալիր,
4. ուսումնասիրության նպատակի և խնդիրների տեսանկյունից իրականացնել փորձարարական աշխատանքների արդյունքների վիճակագրական վերլուծություն, ներկայացնել առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են՝

- հաղորդակցման էության վերաբերյալ տեսությունը (Ա. Լեոնտև (1974), Է. Աթայան (1981), Տ. Բելյաեվա (2006), Լ. Վիկուլովա (2008), Օ. Գլատյուկ (2010), Գ. Թերզյան և այլք (2011), Ա. Ալեքսանյան (2015)),
- հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժության մեջ գոյություն ունեցող ընդունելի տեսակետները (Գ. Էդիլյան (1913), Կ. Ուշինսկի (1949), Յ. Կոմենսկի (1955), Ն. Կոնստանտինով (1982), Ն. Կուզմինա (1990), Լ. Վիգոտսկի (1991), Ս. Եմելյանովա (2004), Վ. Կուկուշին (2005), Լ. Ասատրյան և այլք (2017), Ա. Թոփուզյան (2019)),
- միջանձնային հաղորդակցման տեսությունը (Ն. Կուզմինա (1990), Ա. Մուրաշովա (2002), Մ. Լիսինա (2007), Ի. Պոդլասի (2008), Յ. Կոմենսկի, 2008)),
- բառապաշարի և լեզվական տարրական գիտելիքների յուրացման գործընթացի հիմնադրույթները (Ժ. Կոնդակչյան (1981), Ռ. Խարազյան (2003), Ջ. Գյուլամիրյան (2018)),
- կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան (Ա. Տեր-Գրիգորյան (1974), Ա. Մանուկյան (1976), Ի. Գյոդակյան (1980), Ջ. Գյուլամիրյան (1998), Տ. Լադիժենսկայա և այլք (2013)),

- տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում (Մ. Աստվածատրյան և այլք (2004), Լ. Օլիֆն (2005), Ս. Մուխինա (2008), ՈՒՆԵՍԿՈ...(2018), Ա. Թոփուզյան (2019)),
- հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև ՀՀ տարրական դպրոցի մայրենիի չափորոշիչը, ծրագրերը (2011), դասագրքերը (2010, 2011, 2018) և մեթոդական ձեռնարկները (2007, 2011):

<u>Հետազոտության մեթոդները</u>: Հետազոտության նպատակով, առաջադրած խնդիրներով և վարկածով պայմանավորված՝ ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- տեսական՝ ատենախոսության հիմնախնդրին առնչվող մանկավարժամեթոդական, հոգեբանական գրականության, պետական հանրակրթական փաստաթղթերի, մայրենիի դասագրքերի ուսումնասիրություն և վերլուծություն:
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցաթերթիկային ուսումնասիրում, թեստավորում,
- վիճակագրական մեթոդներ՝ փորձարարական հետազոտության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային պատկերում:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>. մշակել և ՀՀ տարրական դպրոցում ներդրել ենք մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված մեթոդական համալիր և փորձարարությամբ հիմնավորել դրա արդյունավետությունը:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը</u>.

Ուսումնասիրել և ժամանակակից մոտեցումների տեսանկյունից ներկայացրել ենք մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների զարգացման վերաբերյալ հայ և արտասահմանյան մանկավարժահոգեբանական գրականության մեջ առկա հիմնարար գաղափարները, մեթոդական սկզբունքներն ու առանցքային դիրքորոշումները:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը</u>.

Մեր հետազոտության արդյունքները, դրանց հիման վրա մշակած մեթոդական ցուցումներն ու վարժությունների համակարգը կարող են կիրառել.

ա. տարրական դպրոցի ուսուցիչները մայրենիի դասերի ընթացքում,

բ. ծրագրաստեղծ և դասագրքաստեղծ մասնագիտական համախմբերը, ինչպես նաև՝ առնչակից թեմաների շուրջ ուսումնասիրություններ իրականացնող հետազոտողները,

գ. մանկավարժական բուհերի դասախոսները, ուսուցիչներ վերապատրաստող մասնագետները և մանկավարժական բուհերի ուսանողները մանկավարժական պրակտիկաների ընթացքում:

<u>Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն</u> ապահովվում են հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող գիտական աշխատությունների վերլուծությամբ, փորձարարությանը մասնակից ուսուցիչների, կրտսեր դպրոցականների լայն ընդգրկվածությամբ, հետազոտության ընթացքում ձեռք բերած տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության արդյունքներով և կատարած եզրահանգումներով:

<u>Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները</u>.

1. Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի չափորոշիչներով և մայրենիի առարկայական ծրագրով նախատեսված ուսումնական նյութի բովանդակության ուսումնասիրությունը, ժամանակակից մեթոդական համալիրի ներդրումը միանգամայն բավարար նախապայման են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների փուլ առ փուլ զարգացման համար:

2. Պայմանավորված կրտսեր դպրոցականների տարիքային, մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով, ճանաչողական հետաքրքրությունների, դրանց բավարարման ձևերի ինքնատիպությամբ և աստիճանական փոփոխություններով, հասարակական, քաղաքական, տնտեսական առաջընթացով՝ ՀՀ տարրական դպրոցի մայրենիի ծրագրի, դասագրքերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների, մեթոդական համալիրի և ուսուցման միջոցների ու ձևերի արդիականացումը, առաջավոր փորձի տարածումն ու ներդրումը հրամայական պահանջ են:

3. Մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված մեր մշակած և փորձարարությամբ հիմնավորված վարժությունների համալիրը, դրանց կիրառման արդյունավետությանը նպաստող գիտամեթոդական երաշխավորությունները կնպաստեն կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև՝ խոսքի զարգացմանն ընդհանրապես:

<u>Հետազոտության հիմնական փուլերը:</u>

Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով:

Առաջին փուլում (2015-2017) ուսումնասիրել, համակարգել և վերլուծել ենք ատենախոսության թեմային առնչվող հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականություն: Հստակեցրել ենք հիմնախնդրի ուսումնասիրման նպատակը, հիմնավորել ենք թեմայի արդիականությունը, որոշել մեր

ուսումնասիրության առարկան, օբյեկտը, խնդիրները, առանձանացրել ենք փորձարարական աշխատանքի մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Երկրորդ փուլում (2017-2019) տարրական դասարաններում իրականացրել ենք նպատակային դասալսումներ, հարցախույզներ, հայտորոշիչ թեստավորում, մշակել և փորձարկել ենք կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված մեթոդական հիմնարար սկզբունքներ, երաշխավորություններ, խաղ-առաջադրանքներ ու վարժությունների համալիր:

Երրորդ փուլում (2019-2021) ամփոփել ենք կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված աշխատանքները, վերլուծել ենք և ամփոփել արդյունքները: Իրականացրած փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա շարադրել ենք ատենախոսությունը, ձևակերպել ենք եզրակացություններն ու պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

<u>Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումն</u> իրականացրել ենք ՀՊՄՀ հ.57, Արտաշատի հ. 4 հիմնական դպրոցներում, «Վարդանանք» կրթահամալիրում: Ուսումնասիրությունների ընթացքի և արդյունքների մասին հաղորդումներով հանդես ենք եկել ՀՊՄՀ Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, գիտական համաժողովներում և ԲՈԿ-ի կողմից հաստատված ամսագրերում:

<u>Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը</u>: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 161 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, բացահայտված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են հետազոտության իրականացման փուլերը:

Ատենախոսության առաջին՝ **«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման համակարգը (հիմնահարցի պատմություն)»** վերնագրով գլխում քննարկել ենք հետևյալ խնդիրները՝

- Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի գիտական մոտեցումները,
- Հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի հիմնական բաղադրիչները,

• Մանկավարժական գործընթացի սուբյեկտների հաղորդակցության դաշտը որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց,

• Մեդիան և մեդիատեխնոլոգիաները որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոցներ:

Ատենախոսության առաջին գլխում վերլուծել ենք հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի պատմական ընթացքը անտիկ դարաշրջանից մինչև մեր օրեր: Բացահայտել ենք հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի բաղադրիչները՝ ընդգծելով այդ գործընթացի կարևորությունը անձի սոցիալականացման գործում: Ուսումնասիրել ենք կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացումն ապահովող անհրաժեշտ պայմանները՝ դրանք վերլուծելով ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների տեսանկյունից: Որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց կարևորել ենք նաև մեդիակրթությունը՝ ընդգծելով նրա գրագետ կիրառման անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ ներկայացնելով մեր կատարած փորձարարական աշխատանքի արդյունքները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի բովանդակությունը և դրա առանձնահատկությունները»** վերնագրով գլխում դիտարկել ենք հետևյալ խնդիրները՝

• Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման հիմնախնդրի տեղը ՀՀ տարրական դպրոցի կրթական փաստաթղթերում,

• Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացումը մայրենիի դասագրքերի նյութերի ուսումնասիրման ճանապարհով,

• Մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի ուղղությամբ ուսուցիչների մոտեցումների ուսումնասիրում (հարցախույզի արդյունքների վերլուծություն),

• Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում:

Ատենախոսության երկրորդ գլխում վերլուծել ենք «Մայրենիի» գործող առարկայական չափորոշիչը, ծրագիրը՝ կարևորել ենք նաև տարրական դպրոցում դասավանդվող մյուս ուսումնական առարկաների դերը կրտսեր դպրոցականների ինչպես հաղորդակցական կարողությունների, այնպես էլ կապակցված խոսքի զարգացման գործընթացում: Վերլուծելով 1-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերն ու մեթոդական ուղեցույցները՝ եկել ենք

այն եզրակացության, որ դասագրքերում զետեղված տարբեր ժանրերի գեղարվեստական ստեղծագործությունների շուրջ աշխատանքը կարող է նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, եթե դրանք մեթոդապես ճիշտ իրականացվեն: Բազմատեսակ են նշված գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով մեր առաջարկած մեթոդներն ու հնարները. օրինակելի լեզվական կառույցների, երկխոսությունների առանձնացումը, կարդացած ստեղծագործության բովանդակության շուրջ նկարազարդումներ կատարելը, բեմականացումները, դերային խաղերը, բանավեճերը, հարցազրույցները և այլն:

Այս գլխում ներկայացրել ենք նաև տարրական դասարանների ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքները: Դրանց վերլուծությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ մասնակից ուսուցիչները թեև հիմնականում կարևորում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, սակայն նրանց մի մասը հստակ չի պատկերացնում, թե հաղորդակցական կարողությունը ինչ բաղադրիչներ ունի և ամենակարևորը՝ այդ ուղղությամբ ինչ բնույթի աշխատանքներ է անհրաժեշտ իրականացնել: Այս փաստը մենք արձանագրեցինք նաև դասալսումների, ուսուցիչների հետ անցկացրած հարցազրույցների ընթացքում: Այս հանգամանքը մասնավորապես պայմանավորված է նրանով, որ թեև կան սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված հայոց լեզվով առանձին հոդվածներ, ձեռնարկներ, սակայն չկա հենց այս տարիքի համար հստակ մշակված հայալեզու մեթոդիկա: Նաև այս պատճառով ուսուցիչների մեծ մասը պատկերացում չունի կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդիկայի վերաբերյալ և, բնականաբար, համակարգված աշխատանք չի կարողանում իրականացնել այդ կարողության ձևավորման ուղղությամբ: Ավելին, մենք ուսումնասիրեցինք վերջին տասնամյակում իրականացվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացների թեմաները («Հանրակրթության բնագավառի օրենսդրություն», «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում», «Տարիքային հոգեբանություն», «Դիրքորոշում և արժեք», «Համընդհանուր ներառում», «Գնահատում», «Առարկայի դասավանդման մեթոդիկա» և այլն) և բացահայտեցինք, որ նրանցում ընդգրկված չէ որևէ թեմա, որն առնչվում է մայրենիի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգին:

Երկրորդ գլխում հաղորդակցական կարողությունների ձևավորման տեսանկյունից ներկայացրել ենք կրտսեր դպրոցականների տարիքային

առանձնահատկությունները, մեր թեզի թեմայի հիմնախնդրի տեսանկյունից բացահայտել ենք կրտսեր դպրոցականների՝

- ակտիվ և պասիվ բառապաշարների մակարդակները,
- հաղորդակցական տարբեր իրավիճակներում կապակցված խոսք կառուցելու կրտսեր դպրոցականների կարողության մակարդակները,
- կապակցված խոսքում խոսքի մասերի տարբեր գործածման հաճախականությունը:

Հետազոտությունն իրականացրել ենք հանրակրթական երեք հիմնական դպրոցների տարրական դասարաններում (ՀՊՄՀ հմ. 57, Արտաշատի հմ. 4 դպրոցների և «Վարդանանք» կրթահամալիրի 1-4 դասարաններում):

Հետազոտությանը մասնակցել է 147 կրտսեր դպրոցական (74 աշակերտ փորձարարական խմբում և 73-ը՝ ստուգողական խմբում):

Հետազոտության արձանագրման փուլում աշակերտներին հանձնարարել ենք առաջադրանքներ՝ հիմք ընդունելով Ռ. Նեմովի խոսքի զարգացման մակարդակը բացահայտող հայտորոշիչ մեթոդիկան:

Առաջադրանք 1.

Նպատակը՝ բացահայտել հաղորդակցման գործընթացում կապակցված խոսք կառուցելու աշակերտների կարողությունները՝ բառիմաստը բացատրելու ճանապարհով:

Ներկայացնենք ուսումնասիրության արդյունքները (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Աշակերտների՝ բառիմաստի բացատրման կարողության մակարդակները	Փորձարարական		Ստուգողական	
	n=74	%	n=73	%
Շատ բարձր	5	6,8	12	16,4
Բարձր	38	51,4	22	30,1
Միջին	29	39,2	39	53,4
Ցածր	2	2,7	0	0
Շատ ցածր	0	0	0	0

Առաջադրանք 2.

Նպատակը՝ բացահայտել աշակերտների պասիվ բառապաշարի մակարդակները:

Ներկայացնենք ուսումնասիրության արդյունքները (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Աշակերտների պասիվ բառապաշարի մակարդակներ	Փորձարարական		Ստուգողական	
	n=74	%	n=73	%
Շատ բարձր	6	8,1	5	6.8
Բարձր	26	35,1	25	35,8
Միջին	42	56,8	40	58,8
Ցածր	0	0	3	5,4
Շատ ցածր	0	0	0	0

Առաջադրանք 3.

Նպատակը՝ բացահայտել աշակերտների ակտիվ բառապաշարի մակարդակները:

Ներկայացնենք ուսումնասիրության արդյունքները (Աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Աշակերտների ակտիվ բառապաշարի մակարդակ	Փորձարարական		Ստուգողական	
	n=74	%	n=73	%
Շատ բարձր	1	1,4	1	1,4
Բարձր	19	25,7	13	17,8
Միջին	45	60,7	46	63,0
Ցածր	9	12,2	13	17,8
Շատ ցածր	0	0	0	0

Այսպիսով, միավորելով երեք առաջադրանքների կատարման արդյունքները՝ մենք պարզեցինք կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման մակարդակները, որոնք հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի հիմքն են: Արձանագրման փուլի ամփոփիչ արդյուքները (Աղյուսակ 4).

Աղյուսակ 4

Աշակերտների խոսքի զարգացման մակարդակներ	Փորձարարական		Ստուգողական	
	n=74	%	n=73	%
Շատ բարձր	4	5,4	6	8,2
Բարձր	28	37,4	20	27,4
Միջին	39	52,3	42	57,1
Ցածր	4	5,0	5	7,3
Շատ ցածր	0	0,0	0	0,0

Այսպիսով՝ ուսումնասիրելով սովորողների տարիքային առանձնահատկությունները խոսքի զարգացման, հաղորդակցական կարողությունների ձևավորման տեսանկյունից՝ մեր իրականացրած հետազոտության տվյալները մեզ հանգեցրին այն եզրակացություններին, որ մայրենիի դասերի ընթացում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված խնդիրների մեջ առաջնային են.

- աշակերտների բառապաշարի հարստացումը,
- խոսքային տարբեր իրավիճակներով պայմանավորված՝ լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերումը և դրանց նպատակահարմար ու տեղին գործածելու կարողության մշակումը,
- աշակերտների խոսքային գործունեության կարողությունների կատարելագործումը և զարգացումը:

Հաշվի առնելով՝ վերոնշյալ եզրահանգումները, ինչպես նաև ուսումնասիրությունների արդյունքում հանգած եզրակացությունները, մեր կողմից մշակած կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդական համալիրը կառուցել ենք հետևյալ փուլային հաջորդականությամբ *(տե՛ս գծապատկեր 1-ը)*.

Գծապատկեր 1. Մեթոդական համալիրի կառուցվածքը.



Ատենախոսության երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համալիրը մայրենիի դասերին»** վերնագրով գլխում քննարկել էինք.

- Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացումը տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ,
- Ուսումնական երկխոսությունը և մենախոսությունը որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման միջոցներ,
- Իրադրային խաղերը որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման արդյունավետ միջոց,
- Մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համալիրի փորձարկման արդյունքները:

Ատենախոսության վերջին գլխում ներկայացրել ենք կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման ուղղությամբ մեր իրականացրած փորձարարության արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը, դրանց հիման վրա՝ մեթոդական երաշխավորությունները: Փորձարարության ընթացքում ներդրել ենք տարրական դպրոցների մայրենիի դասերին մեր մշակած մեթոդական համալիրը:

Մեր մշակած մեթոդական համալիրի փորձարկման աշխատանքների ավարտից հետո իրականացրինք ամփոփիչ ստուգում.

Ներկայացնենք ստացված տվյալները աղյուսակով (Աղյուսակ 5).

Աղյուսակ 5

Աշակերտների խոսքի զարգացման մակարդակները	Փորձարարական				Ստուգողական			
	Արձանագրման փուլ		Ամփոփիչ փուլ		Արձանագրման փուլ		Ամփոփիչ փուլ	
	n=74	%	n=74	%	n=73	%	n=73	%
Շատ բարձր	4	5.4	4	24.3	4	8.2	4	13.7
Բարձր	27	36.5	32	43.2	20	27.4	25	34.2
Միջին	39	52.7	24	32.4	42	57.5	38	52.1
Ցածր	4	5.4	0	0	5	6.8	0	0
Շատ ցածր	0	0	0	0	0	0	0	0

Համեմատելով և վերլուծելով փորձարարական և ստուգողական դասարաններում իրականացրած աշխատանքների արդյունքները (տե՛ս տրամագիր 1-ը)՝ եզրակացրինք, որ մեր մշակած մեթոդական համալիրում ընդգրկված առաջադրանքները, էլեկտրոնային խաղ-վարժությունները, որոնք կրտսեր դպրոցականներից պահանջում են իրականացնել ակտիվ խոսքային գործունեություն, տանում են մտավոր որոնումների ոլորտ և սովորողներին մղում

են ընդարձակ դատողություններով ներկայացնելու սեփական մտքերը, մտահանգումները, ակտիվորեն և գրագետ հաղորդակցվել, արդյունավետորեն նպաստում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հիմնախնդրի շուրջ իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման ուղղությամբ հայ և արտասահմանյան մեթոդիկայում կուտակված փորձը, ներկայացրած մեթոդներն ու մոտեցումներն ուսումնասիրելով՝ հանգել ենք այն եզրահանգման, որ հաղորդակցման գործընթացում էական նշանակություն ունեն կրտսեր դպրոցականների բառապաշարը, լեզվական տարրական գիտելիքների իմացությունը, բարենպաստ մանկավարժական միջավայրը, որոնք նպաստում են տարբեր իրադրություններում կողմնորոշվելու, գրագետ կապակցված խոսք կառուցելու սովորողների կարողությունների զարգացմանը:

2.Բացահայտել ենք, որ մայրենիի ուսումնասիրության գործընթացում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացմանը կարող են նպաստել հետևյալ գործոնները.

➢ տարրական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում բարենպաստ կրթական միջավայրի ստեղծումը, ազատ, անկաշկանդ հաղորդակցման պայմանների ապահովումը,

➢ սովորողների բառապաշարի հարստացումը և հաղորդակցական իրավիճակներին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրությամբ, խոսքի քերականական կառուցվածքի մշակումը,

➢ աշակերտների խոսքային գործունեության կազմակերպումը էլեկտրոնային խաղ-առաջադրանքների, լեզվական վարժությունների դերային և իրադրային խաղերի, հաղորդակցական տարաբնույթ իրադրությունների, կարդացած բնագրերի շուրջ վերլուծահամադրական աշխատանքների, երկխոսությունների միջոցով:

3. Բացահայտեցինք, որ կրտսեր դպրոցականները դժվարանում են հաղորդակցվել կապակցված խոսքով, ինչը առավելապես պայմանավորված է նրանց ակտիվ բառապաշարի աղքատությամբ, լեզվական տարրական գիտելիքների իմացության ոչ բավարար մակարդակով, տարաբնույթ ճանաչողական տեղեկույթի անբավարար տիրապետմամբ, ճանաչողական հետաքրքրությունների սակավությամբ և այլն: Այս խնդիրների լուծման նպատակով տարրական դասարանների դասագրքերում զետեղված նյութերի

բովանդակության, գաղափարի, ենթատեքստի, դիպաշարի տրամաբանության շուրջ մեթոդական կառույցներում ներկայացնել այնպիսի վարժություններ, առաջադրանքներ, փոխգործուն հնարներ, որոնք կստեղծեն հաղորդակցվելու անհրաժեշտություն և հնարավորություններ:

4. Ուսուցիչների շրջանում իրականացված ուսումնասիրությունները նաև ցույց տվեցին, որ աշակերտների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում նրանց գիտելիքների սակավությունը պայմանավորված է հայալեզու գրականության մեջ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդիկայի վերաբերյալ նյութերի անբավարությամբ:

5. Ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հաղորդակցության գործընթացի մեթոդապես ճիշտ կազմակերպումը անառարկելի դրական ներգործություն ունի կրտսեր դպրացականների հաղորդակցական կարողությունների զարգացման մակարդակի վրա. այն առավելապես պայմանավորված է ուսուցչի հոգեբանական, անձնային, մասնագիտական որակներով, խոսքի մշակույթով, մեդիատեխնոլոգիաներով աշխատելու կարողությամբ, այսինքն՝ մանկավարժի մասնագիտական բոլոր կարողունակություններով: Մեթոդապես ճիշտ կազմակերպված հաղորդակցական գործընթացը տալիս է ուսուցիչ-աշակերտ հոգեբանական կապի ապահովման հնարավորություն: Սա ուսուցչին և աշակերտին դարձնում է հաղորդակցման սուբյեկտներ՝ աջակցելով հաղթահարել այն տարաբնույթ խոչընդոտները, որոնք առաջանում են կրթադաստիարակչական գործընթացում:

6. Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով մեր մշակած և փորձարկած մեթոդական համալիրը, այդ թվում՝ խաղ-առաջադրանքները և էլեկտրոնային վարժությունները, սովորողներին ուղղորդում են մտավոր որոնումների ոլորտ՝ նրանց մղելով ընդարձակ դատողություններով, մտահանգումներով ակտիվորեն և գրագետ հաղորդակցվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ՀՀ տարրական դպրոցում հիմնախնդրի դրվածքը՝ հաղորդակցական կարողությունների զարգացման ուղղությամբ արդյունավետ և նպատակաուղղված աշխատանք կազմակերպելու նպատակով առաջարկում ենք.

1. իրականացնել դպրոց ընդունվող յուրաքանչյուր երեխայի կարիքների բացահայտում, ուսումնական գործընթացի հիմքում դնել դրանք բավարարելու պահանջը,

2. կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով պարբերաբար իրականացնել հայտորոշիչ աշխատանքներ և նրանց արդյունքների հիման վրա մշակել, կիրառել աշխատանքային համալիր ծրագիր,

3. ուսուցիչների կարիքների բավարարման նպատակով կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման խնդրի շուրջ իրականացնել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ,

4. մշակել թվային մեդիագործիքներից օգտվելու տարրական կարողության զարգացման մեթոդներ, սահմանել հստակ կանոններ և հետամուտ լինել տարրական դպրոցում դրանց կիրառմանը,

5. ծնողների շրջանում իրականացնել աշխատանքային համալիր ծրագիր (ծնողական ժողովներ, հանդիպումներ, սեմինարներ, իրադրային խաղեր և այլն)՝ քննարկելով մեդիագործիքներից օգտվելու կանոնները, թվային մեդիագործիքները՝ որպես երեխայի հաղորդակցման կարողությունները զարգացնող (ոչ թե միայն ժամանցի կազմակերպման միջոց) հնարներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Ենոքյան Տ., Կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողության ձևավորման հնարավորությունները մայրենիի դասերի ընթացքում (հարցաթերթիկային ուսումնասիրություն), «Մանկավարժական միտք» հանդես: 2(75): Երևան, «ԶԱՆԳԱԿ» հրատ., 2021, էջ 248-256:
2. Ենոքյան Տ., Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը իրադրային խաղերի միջոցով, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Հայագիտական հանդես: N2(44): Երևան, 2019, էջ 146-155:
3. Ենոքյան Տ., Կրտսեր դպրոցակնների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդների և միջոցների կարևորությունը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Գիտական տեղեկագիր (հումանիտար գիտություններ): N1-2(34-35): Երևան, 2018, էջ 36-40:
4. Ենոքյան Տ., Տեղեկատվական տեխնոլոգիաների ներգործությունը հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարան, «Մխիթար Գոշ» գիտական և ուսումնամեթոդական հոդվածներ, Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, 2018, էջ 132-135:
5. Ենոքյան Տ., Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողության ձևավորման հիմնախնդիրը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Գիտական տեղեկագիր (հումանիտար գիտություններ): N4(33):Երևան, 2017, էջ 68-73:

6. Գյուլամիրյան Ջ., Ենոքյան Տ., Միջանձնային հարաբերությունները որպես հաղորդակցական կարողությունների ձևավորման խթան ուսուցման գործընթացում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի»: 2(41): Երևան, Լինգվա, 2017, էջ 454-459:
7. Ենոքյան Տ., Ուսուցչի խոսքի ազդեցությունը կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում, «Մանկավարժական միտք» հանդես: 3-4(66-67): Երևան, «ՁԱՆԳԱԿ» հրատ., 2017, էջ 234-237:
8. Ենոքյան Տ., Երկխոսությունը և մենախոսությունը կրտսեր դպրոցականի հաղորդակցական ունակության զարգացման գլխավոր միջոց, «Մանկավարժական միտք» հանդես: 1-2(60-61): Երևան «ՁԱՆԳԱԿ» հրատ., 2016, էջ 215-218:

ЕНОКЯН ТАТЕВИК ВАРДАНОВНА

ФОРМИРОВАНИЕ КОММУНИКАТИВНЫХ СПОСОБНОСТЕЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ НА УРОКАХ РОДНОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 «Методика преподавания и обучение» (родной язык). Защита диссертации состоится в 9 ноября 2023г., в 12:00, на заседании специализированного совета «Педагогика» 020 ВАК РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В контексте реформ, осуществляемых в политике и содержании образования РА, развитие коммуникативных способностей человека является основной чертой его жизнедеятельности.

Известно, что человек в течение жизни выполняет различные социальные роли, которые диктуют его коммуникативное поведение. Ребенок представляется в разных ролях дома, в детском саду, в школе, в общественных местах и, естественно, ему приходится говорить, общаться и действовать по-разному. Часто именно от его коммуникативного поведения зависит, насколько правильно и адекватно он будет воспринят собеседником, будет ли его общение эффективным, достигнет ли он цели общения, будет ли его коммуникативное поведение этичным.

Бесспорно, что на современном этапе беспрецедентного развития информационных и коммуникационных технологий процесс живого общения

сильно подорван. Современное поколение предпочитает проводить время перед гаджетами больше, чем среди сверстников или в общей социальной среде. Проблемы, возникающие, в связи с этим, являются серьезными вызовами для педагогов и руководителей сферы образования, которые диктуют не только необходимость разработки новой политики в этом направлении, но и требование создания необходимых педагогических условий для обучающихся. В ходе исследований, проведенных нами в начальной школе, мы обнаружили, что работы, направленные на развитие коммуникативных способностей младших школьников, недостаточны, неполны по содержанию. Хотя в предметных программах родного языка всех классов начальной школы отводится определенное место развитию упомянутых способностей, но в ходе исследования мы обнаружили, что у учителей нет необходимого уровня знаний и умений в этом направлении, более того, почти нет объяснительного материала по этому вопросу в методических указаниях к учебникам, к сожалению, на армянском языке издано мало книг и статей, касаемых данной проблемы.

Таким образом, актуальность темы нашего исследования обусловлена бесспорной значимостью коммуникативных способностей в повышении эффективности многопрофильной деятельности современного человека, а с другой стороны, неадекватностью уровня коммуникативных способностей младших школьников и несовершенством работы по этому направлению в начальной школе.

Целью нашего исследования было выявить возможности занятий родным языком для развития коммуникативных способностей младших школьников, разработать и внедрить методический комплекс, способствующий развитию коммуникативных способностей младших школьников в начальной школе РА.

Задачи исследования:

1. изучить и проанализировать исторический опыт процесса развития коммуникативных способностей младших школьников на уроках родного языка в начальной школе,

2. выявить факторы, способствующие развитию коммуникативных способностей младших школьников в процессе изучения родного языка, рассматривая их с точки зрения удовлетворения их познавательных интересов и потребностей,

3. выявить трудности младших школьников в процессе общения, рассмотреть их причины, разработать, обосновать опытами и внедрить методический комплекс, направленный на развитие коммуникативных

способностей учащихся посредством изучения материалов, предусмотренных программой предмета родного языка,

4. с точки зрения цели и задач исследования провести статистический анализ результатов экспериментальных работ, представить рекомендации.

Научная новизна исследования. Мы разработали и внедрили методический комплекс, направленный на развитие коммуникативных способностей младших школьников на уроках родного языка в начальной школе РА, и экспериментально обосновали его эффективность.

Теоретическая значимость исследования:

С точки зрения современных подходов нами изучены и представлены основные идеи, методические принципы и ключевые положения армянской и зарубежной педагогико-психологической литературы относительно развития коммуникативных способностей младших школьников на уроках родного языка.

Практическая значимость исследования:

Результаты нашего исследования, разработанные на их основе методические указания и система упражнений могут применять:

а. учителя начальных классов на уроках родного языка,

б. профессиональные ассоциации разработчиков программного обеспечения и создателей учебников, а также ученые, проводящие исследования по смежным темам,

в. преподаватели педагогических вузов, специалисты по подготовке повышения квалификации и студенты педагогических вузов во время прохождения педагогических практик.

Структура и объем работы. Работа состоит из введения, трех глав, заключения, рекомендаций, списка использованной литературы, приложения. Общий объем работы составляет 161 страница компьютерного шрифта.

TATEVIK YENOKYAN

THE FORMATION OF COMMUNICATIVE ABILITIES OF YOUNGER SCHOOLCHILDREN AT MOTHER TONGUE CLASSES

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 "Teaching and Education Methodology" (mother tongue). The defence of the thesis will be held at SCC of RA 020 degree-awarding scientific council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on November 9, at 12:00 pm, Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

SUMMARY

The relevance of the research. In the context of the reforms implemented in the RA education policy and content, the development of a person's communicative abilities is emphasized as an important ability of his life activity.

It is known that a person performs various social roles in life, which predetermine his/her communicative behavior. A child plays different roles at home, in kindergarten, at school, in public places and, consequently, s/he has to speak, communicate and act in different ways. It often also depends on how correctly and adequately he will be perceived by the interlocutor, whether his communication will be productive, whether he will achieve his communicative goals or behave politely.

It is undeniable that in the current stage of unprecedented development of information and communication technologies (ICT), the face-to-face communication process has been greatly undermined because the modern generation prefers to spend time in front of digital tools more than among peers or in general social environment. The problems arising in this context are serious challenges for pedagogues and those in charge of the sector of education, which dictate not only the need to develop a new policy in that sphere, but also the demand to create the necessary pedagogical conditions for students. During the studies conducted in the elementary school, we have discovered that the activities aimed at developing the communicative abilities of junior schoolchildren are insufficient and the content is incomplete. Although in the subject programs of the mother tongue of all classes of the elementary school, a certain place is allocated to the development of the mentioned abilities, but during our studies, we discovered that the teachers do not have the necessary level of knowledge and abilities in this aspect, moreover, there is almost no reference to this issue in the textbook guidelines, therefore, there is also no reference to this issue in the Armenian language, only a few books and articles have been published in this sphere.

Thus, the relevance of our research topic is determined by the unquestionable importance of communicative abilities in increasing the effectiveness of multidisciplinary activities of a modern person, on the one hand, and by the insufficient level of communicative abilities of junior schoolchildren and the imperfection of work in this aspect in elementary school, on the other.

The aim of our study is to identify the possibilities of mother tongue classes for the development of the communication abilities of younger schoolchildren, to develop and introduce a methodological complex that promotes the development of communicative abilities of younger schoolchildren in the elementary school of RA.

To achieve this aim the following **objectives have been set forth:**

1. to study and analyze the historical experience of the process of developing the communicative abilities of younger schoolchildren during the mother tongue classes in elementary school,

2. to identify the factors contributing to the development of the communicative abilities of younger schoolchildren in the process of studying their native language,

considering them from the point of view of satisfying their cognitive interests and needs,

3. to single out the difficulties of younger schoolchildren in the communicative process, consider their causes, develop, substantiate with experiments and introduce a methodological complex aimed at the development of students' communicative abilities through the study of the materials provided by the subject program of the native language,

4. to carry out a statistical analysis of the results of the experimental works, to present recommendations from the point of view of the purpose and problems of the study.

The scientific novelty of the research. We have developed and implemented a methodological complex aimed at the development of the communication abilities of younger schoolchildren during the lessons of the native language in the elementary school of RA and its effectiveness substantiated with experiments.

Theoretical significance of the research. From the point of view of modern approaches, we have studied and presented the fundamental ideas, methodological principles and key positions in the Armenian and foreign pedagogic-psychological literature regarding the development of the communication abilities of younger schoolchildren during the lessons of the mother tongue.

Practical significance of the research. The results of our research, the methodical instructions based on them and the system of exercises can be used by:

a. primary school teachers during mother tongue lessons,

b. professional associations of software developers and textbook creators, as well as researchers conducting studies on related topics,

c. professors of pedagogical universities, teacher training specialists and students of pedagogical universities during pedagogical internships.

The structure and scope of the work. The work consists of an introduction, three chapters, conclusions, recommendations, a list of used literature, appendices. The total volume of the work is 161 pages of computer type.